
Արման Եղիազարյան, Հայ Բագրատունիների տերությունը (885-908). պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 394 էջ:

Հայոց պատմության մեջ Բագրատունիների թագավորության պատմաշրջանը կարևոր և առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Անկախության երկարատև կորստից հետո հայոց պետականության վերականգնումը և միասնական ու կենտրոնացված թագավորության ստեղծման փորձը ցույց են տալիս այն լուրջ քաղաքական նպատակները, որոնք իրենց առջև դրել էին Բագրատունի արքաները: Ցավոք, պատմագրության մեջ բավարար ուշադրության չեն արժանացել Բագրատունյաց պետության սահմանների, տարածքային ընդգրկման և ներքին վարչական կառուցվածքի հիմնահարցերը, այլ կերպ ասած՝ հայոց տերության պատմաաշխարհագրական ինտիրները: Սակայն պատմական փաստերը որոշակիորեն վկայում են, որ IX դարի վերջին և X դարի սկզբին վերականգնված հայոց թագավորությունը լուրջ հայտ էր ներկայացրել վերածվելու տարածաշրջանային գերտերության՝ իր մեջ ընդգրկելով ոչ միայն բուն Հայաստանի, այլև մինչև Կովկասյան լեռներն ու Սև ծովն ընկած բազմաթիվ երկրների ու երկրամասերի տարածքները:

Այս տեսանկյունից ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Արման Եղիազարյանի գրախոսվող պատմաաշխարհագրական ուսումնասիրությունը նոր խոսք է: Հեղինակի ամենակարևոր արժանիքներից է հայկական և բազմալեզու սկզբնադրյուրներ ընդգրկող աղբյուրագիտական հարուստ հենքի օգտագործումը՝ թե՝ հայ մատենագիրների և թե՝ արաբ, բյուզանդացի ու վրաց պատմիչների երկասիրությունները: Նշենք, որ արաբական սկզբնադրյուրներից Ա. Եղիազարյանն օգտվել է բնագրով և դրանց տեղեկությունների մի մասը գիտական շրջանառության մեջ դրել առաջին անգամ: Ընդ որում, նա դրսերել է պատմաաշխարհագրական քննություն իրականացնելու անառարկելի ունակություններ՝ չշրջանցելով նաև իր նախորդների ուսումնասիրությունները:

Հայոց պետականության պատմության ուսումնասիրության շահեկանությունից ելնելով՝ Ա. Եղիազարյանը մի կողմից հիմնավորել է IX դարում և X դարի սկզբին Հայաստանում և Այսրկովկասում տիրող իրավիճակը միևնույն համատեքստում դիտարկելու մոտեցումները, իսկ մյուս կողմից պատմաաշխարհագրական քննական վերլուծության է ենթարկել Բագրատունիների տերության կազմում ընդգրկված երկրները, երկրամասները և իշխանություններն առանձին-առանձին:

Հեղինակն անդրադարձել է IX դարի վերջին ձևավորված Բագրատունիների տերության սահմաններին և տարածքին, համառոտ անդրադարձներ կատարել մինչ այդ Հայաստանում և Այսրկովկասում արաբական վարչական բաժանմանը: Նա առանձնահատուկ ուշադրություն է դարձրել այն քաղաքական պայմանների վերհանմանը, որոնք նպաստել են Բագրատունյաց իշխանների դերի բարձրացմանը և, ի վերջո, Հայաստանում ու Այսրկովկասում նրանց գերազանց դիրքերի ապահովմանը:

Ըստ Էռլիքյան, փաստարկված նորույթ է Ա. Եղիազարյանի բարձրացրած՝ Հայ Բագրատունիների պետության՝ իրքն «տերության» հիմնահարցը: Հաշվի առնելով նախորդների կարծիքները՝ նա հիմնավորում է իր տեսակետը, ցույց տալիս այն կարգավիճակը, որը տարածաշրջանում ուներ հայոց թագավորությունը: Նա առաջիններից է Սմբատ Ա-ի թագավորության պատմության ուսումնասիրության շրջանակում հավուր պատշաճի օգտագործել «Մշո Սուրբ Աղբերիկ վանքի կոնդակ»-ը՝ որպես պատմական հավաստի սկզբնաղբյուր: Թեև այլը նախկինում անդրադարձել են այդ սկզբնաղբյուրին, բայց այն հավաստի չեն համարել, քանի որ դրանում առկա են ընդմիջարկություններ և սխալներ: Մինչդեռ հեղինակն արժևորել է այդ փաստաթղթի պատմական արժեքը և դրանից քաղված արժանահավատ տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա հանգել կարևոր եղահանգումների:

Ըստարձակ շարադրանքի հենքի վրա Ա. Եղիազարյանն անդրադարձել է Աղվանից և Կղարջի (Վրաց) թագավորությունների ստեղծմանը և իրավացիորեն փաստել, որ Աղվանից և Կղարջի իշխաններին թագաղրել է Սմբատ Ա-ն՝ հաջորդաբար 894 և 899 թվականներին:

Բագրատունիների տոհմական և արքունի տիրույթներին նվիրված բաժնում Ա. Եղիազարյանն ուսումնասիրել է արքայատոհմին ենթակա գավառները, դրանց տարածքային ընդգրկումը, սահմանները, ձևավորման պատմությունը, ցույց տվել IX դարի սկզբից՝ մեկ հարյուրամյակի ընթացքում Բագրատունիների տիրույթների աստիճանական աճը, որը տնտեսական, մարդկային և քաղաքական ռեսուրսների առումներով հանգեցրել է Այսրկովկասում նրանց առաջնակարգ դիրքերի հաստատմանը:

Ա. Եղիազարյանի հիմնավոր տեսակետներից կարևորում ենք և ցանկանում առանձնացնել հատկապես Տայքին վերաբերող մոտեցումը: Նա ապացուցում է, որ վրաց անվանված Բագրատունիների տիրույթներն ի սկզբանե չեն ընդգրկել Տայքը, որը վրաց պատմաբաններն անվերապահորեն համարում են «Վրացական» տարածք և իր վրացարնակ: Համադրելով հավաստի սկզբնաղբյուրների (այդ թվում՝ վրացական) տեղեկությունները հեղինակը հանգել է այն համոզիչ եղակացության, որ Տայքը Հայ Բագրատունիների տոհմական տիրույթի մասն էր կազմում նախքան Աշոտ Մսակերի իշխանության ժամանակաշրջանը (802-826), իսկ Հայ Բագրատունիների տերության

օրոք քաղաքական առումով ոչ մի առնչություն չուներ Կղարջի կուրապա-դատության հետ:

Հեղինակն անդրադարձել է նաև Մեծ Հայքի տարբեր՝ Բագրատունիների տիրույթներին կցված զավառներին, հիմնավորապես ապացուցել, որ Գուգարքի մեծ մասն ընդգրկված էր Հայ Բագրատունիների արքունի տիրույթներում: Այս հիմնախնդիրը ևս նա ուսումնասիրել է ըստ վրացական սկզբնադրյուրների համարման, ինչը խիստ կարևոր է:

Ա. Եղիազարյանը ներկայացրել է IX դարի վերջին Բագրատունի արքաներին անմիջականորեն ենթարկվող և միաժամանակ որոշակի ինքնուրույնություն պահպանող հայկական իշխանությունները, որոնց թվում էին Վասպուրականի, Անձնացյաց, Սյունյաց, Հայոց Արևելից կողմերի, ինչպես նաև Համամաշենի (Համշենի) իշխանությունները: Որոշակի նորույթ է հատկապես վերջինիս ուսումնասիրությունը: Հեղինակը, մասնավորապես, օտար սկզբնադրյուրների վերլուծության հիման վրա փաստորեն ապացուցել է Համամաշենի հայկական իշխանության ներառումը Բագրատունյաց տերության կազմում: Ավելին, արար հեղինակների երկերում պահպանվել են որոշակի վկայություններ, որոնք հիմք են տալիս հնարավոր համարելու Տրապիզոնի և նրա շրջակայքի՝ Հայ Բագրատունիներին ժամանակավորապես ենթարկվելու հավանականությունը: Կարևոր է նաև հեղինակի՝ Համշեն և Արտաշեն բերդաբարձրների տեղադրության հարցի ճշգրտումը:

Ա. Եղիազարյանն անդրադարձել է Հայ Բագրատունիների տերությանը ենթակա այսրկովկապայան երկրներին, որոնց թագավորները և իշխաններն ընդունում էին հայ արքաների գերազահությունը: Փաստորեն, պատմագրության մեջ նա առաջինն է միասնական աշխատության մեջ ի մի բերում նման կարգավիճակ ունեցած այսրկովկապայան բոլոր երկրներն ու երկրամասերը՝ մանրազնին քննության ենթարկելով նաև վերջիններիս պատմաաշխարհագրական առանձնահատկությունները:

Անհրաժեշտ ենք համարում արժենորել Կղարջի կուրապադատության վերաբերյալ հեղինակի կատարած՝ պատմաաշխարհագրական առումով բազմաթիվ նորություններ պարունակող քննությունը, որոնց թվում հարկ է առանձնացնել, մասնավորապես, դրա սահմանների ճշգրտումը, որը նա կատարել է նաև վրացական սկզբնադրյուրների տեղեկությունների վերլուծության հիման վրա: Նշենք, որ նրա արծարծած մի շարք պատմաաշխարհագրական հիմնահարցեր առ այսօր վրիպել էին ուսումնասիրողների ուշադրությունից:

Անդրադառնալով Հայ Բագրատունիներին ենթակա արաբական ամիրայությունների կարգավիճակին՝ Ա. Եղիազարյանը ցույց է տվել, որ նրանց տիրապետության ժամանակաշրջանում հատկապես Սմբատ Ա-ին հաջողվել է խիստ կրծատել ամիրայությունների տարածքները՝ դրանց զգալի մասը կցելով արքունի տիրույթներին:

Պատմաաշխարհագրական տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում մենագրության՝ Բագրատունիների տերության մեջ ընդգրկված քաղաքներին, քաղաքացյուղերին, բերդերին, վանքերին և եկեղեցիներին նվիրված բաժինը, որտեղ հեղինակն արժևորել է խնդրո առարկա ժամանակաշրջանում սկզբնաղբյուրներում հիշատակված նշանավոր բնակավայրերի նշանակությունն ու դերը, որը կարևոր ներդրում է Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության ասպարեզում: Հարկ է մոռացության չմատնել նաև, որ նման փորձ նա կատարել է առաջին անգամ, ինչն ինքնին ողջունելի է:

Ա. Եղիազարյանն ընտրողաբար անդրադարձել է տերության համար, անկախ դրանց կառուցման ժամանակաշրջանից, կարևորություն ունեցած քաղաքային բնակավայրերին, բերդերին, վանքերին ու եկեղեցիներին, ցույց տվել, որ քաղաքային բնակավայրերի զարգացման առումով Հայ Բագրատունիների տիրապետության ժամանակաշրջանին բնորոշ է հիմնականում քաղաքացյուղերի առկայությունը, բերդերի նշանակության առումով՝ սահմանային ամրությունների համակարգերի ձևավորումը, իսկ նոր կառուցվող կամ վերակառուցվող վանքերի ու եկեղեցիների աշխարհագրական ընդգրկման տեսանկյունից՝ աշխարհագրական որոշակի սահմանափակվածությունը: Նա երբեմն անուշադրության չի մատնել նաև այնպիսի վանքեր և եկեղեցիներ, որոնք չնայած Բագրատունիների օրոք չեն հիշատակվում, սակայն իրենց շինարարական հորինվածքով օրինակ են ծառայել այդ ժամանակաշրջանում Հայաստանում և Այսրկովկասում կառուցված, կարևոր նշանակություն ունեցող բազմաթիվ եկեղեցիների համար:

Հեղինակը քննական վերլուծության է ենթարկել նաև IX դարի վերջին և X դարի սկզբին Հայաստանի և այսրկովկասյան երկրների համար միջազգային նշանակություն ունեցած կարևորագույն առևտրական ճանապարհները: Սկզբնաղբյուրների տեղեկությունները համադրելով աշխարհագրական-քարտեզագրական նյութի հետ՝ նա առանձին ենթագլուխներում անդրադարձել է Բագրատունիների տերության տարածքում ձգված մեկ տասնյակից ավելի առևտրական մայրուղիներին, դրանց հարած նշանավոր բնակավայրերին, քննարկել է և ճշգրտել վերջիններիս միջև ընկած տարածությունները: Ա. Եղիազարյանը մանրամասնորեն հետազոտել է առևտրական ճանապարհների երթուղիները, տեղորոշել բազմաթիվ կայարաններ: Անհրաժեշտ է նշել, որ յեն այդ հարցերը եղել են շատ միջնադարագետների ու շաղության կենտրոնում, այդուհանդերձ հեղինակը լրացրել է բազմաթիվ բացեր: Ընդհանրապես՝ քննական մոտեցում ցուցաբերելով իր նախորդների գրքին պատկանող ուսումնասիրությունների հանդեպ՝ նա նկատել է տարբեր բացրողումներ և զգալիորեն լրացնել դրանք, հարստացրել մեր պատմության ուսումնասիրության անդաստանը:

Հաճելիորեն նկատենք, որ Ա. Եղիազարյանի պատրաստած և սույն աշխատությանը կցված վեց քարտեզները նորույթ են, որոնցում նա փորձել է de facto արձանագրել իր ուսումնասիրության արդյունքները՝ կատարելով համապատասխան պատմաաշխարհագրական ճշգրտումներ և ուղղումներ:

Ա. Եղիազարյանի աշխատությունը խիստ արդիական է, քանի որ նման մոտեցումներով Հայ Բագրատունիների թագավորության պատմությունը նախկինում առանձին ուսումնասիրության առարկա չէր դարձել, որի հետևանքով բազմաթիվ պատմաաշխարհագրական հիմնահարցեր, որոնք այսօր նաև որոշակի քաղաքական ենթատեքստով անընդհատ քննարկվում են, մնացել են չլուծված: Այդ ամենը հարևան երկրների որոշ պատմաբանների հնարավորություն է ընձեռել նենգափոխել կամ խեղաթյուրել պատմական անցյալը: Սույն հետազոտությունը գալիս է լրացնելու այդ բացը և պատասխանելու պատմահենությանը:

Ինչպես յուրաքանչյուր ուսումնասիրություն, Ա. Եղիազարյանի մենագրությունը ևս զերծ չէ որոշ թերություններից, որոնք, ձիշտ է, ստվեր չեն նետում նրա կատարած արդյունավետ աշխատանքի վրա, սակայն կարիք ունեն հիշատակության՝ հետազայում դրանցից զերծ մնալու մղումից դրդված: Հարկ է նախ և առաջ նշել, որ նրա իրականացրած պատմաաշխարհագրական ճշգրտումներն ու տեղորոշումներն ամբողջությամբ արտացոլված չեն մենագրությանը կցված քարտեզներում: Ցանկալի կլիներ նաև առանձին քարտեզի տեսքով ներկայացնել Բագրատունիների տոհմական և արքունի տիրույթները, որոնք թեև արտացոլված են գլխավոր քարտեզում, սակայն առանձնաբար ներկայացվելու պարագայում ընթերցողին կհաղորդեին կարևոր մանրամասներ: Ի վերջո, աշխատության վեջում տեղադրված հատուկ անունների ցանկը ներկայացված է որպես անվանացանկ, մինչդեռ պատմաաշխարհագրական ուսումնասիրություններում ընդունված է այն բաժանել առանձին՝ աշխարհագրական անունների կամ տեղանունների և անձնանունների բաժինների:

Եզրափակելուց առաջ ցանկանում ենք վստահորեն նշել, որ Արման Եղիազարյանը գիտական և ընթերցող լայն շրջանակների ուշադրությանն է ներկայացրել կարևոր մի աշխատություն, որն առավել ևս արժենորվում է՝ ներկայում հայոց պատմության միջնադարյան շրջանի նկատմամբ գիտական հետաքրքրության նվազման պայմաններում:

ՊԵՏՐՈՍ ՀՂՎՃԱՆՆԻՍՅԱՆ